DOI: 10.59560/18291155-2025.1-288

ՎԱՀԱԳՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի
«Քրեական արդարադատություն
և փաստաբանություն» ծրագրի
1-ին կուրսի մագիստրանտ

ԱՆՁԻՆ ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ ԾԱԳԱԾ ՀԻՄՆԱՎՈՐ ԿԱՍԿԱԾԻ ՀԻՄՔՈՎ ՁԵՐԲԱԿԱԼԵԼՈՒՑ ԵՎ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼՈՒՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՄԵՂԱԴՐՅԱԼԻՆ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԻՄՔՈՎ ՁԵՐԲԱԿԱԼԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ամփոփագիր

Սույն աշխատությունում քննարկվում են նախաքննության ընթացքում անձին հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով ձերբակալելուց, այնուհետև ազատ արձակելուց անմիջապես հետո կամ կարճ ժամանակ՝ րոպեներ անց, արդեն ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու հիմքով ձերբակալման հիմնախնդիրները:

Տվյալ ուսումնասիրությունները կատարվել են ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի շրջանակներում: Սույն աշխատությունում փորձ է արվել վեր հանել վերոնշյալ ինստիտուտի՝ պրակտիկայում առավել հաճախ հանդիպող խնդիրները, վեր հանել օրենսդրական բացերը, թերի կարգավորումները, ստեղծվող իրավիճակների համար լուծումներ գտնել:

Աշխատության շրջանակներում փորձելու ենք պատասխանել՝ արդյոք անձը կարող է անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալվելուց և ազատ արձակվելուց անմիջապես հետո (րոպեներ անց) ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու հիմքով ձերբակալվել:

Հիմնաբառեր. ձերբակալում, կալանք, հիմնավոր կասկած, մեղադրյալ, անմիջականորեն ծագած հիմնավոր կասկած:

Իրավակիրառ պրակտիկայում հաճախ հանդիպում է իրավիճակ, երբ անձն անմիջականորեն ծագած կասկածի հիմքով ձերբակալվելուց և ազատ արձակվելուց անմիջապես հետո (րոպեներ անց) կրկին ազատությունից զրկվում է և ձերբակալվում է արդեն ձերբակալման երկրորդ տեսակով՝ ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու հիմքով:

2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում էապես փոխվել են ձերբակալման հայեցակարգն ու դրա իրավական կարգավորումները:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի՝

1. Ձերբակալումը կարող է կիրառվել՝

1) հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում.

2) ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար.

3) խափանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալի նկատմամբ:

2. Անձը համարվում է ձերբակալված նրան ազատությունից փաստացի զրկելու պահից:

(…)

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի՝

1. Անձը հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում կարող է ձերբակալվել, եթե՝

1) նա բռնվել է ենթադրյալ հանցանքը կատարելիս կամ այն կատարելուց անմիջապես հետո.

2) ականատեսն ուղղակի մատնանշում է տվյալ անձին որպես քրեական օրենքով նախատեսված արարքը կատարողի.

3) տվյալ անձի կամ նրա հագուստի կամ նրա կողմից օգտագործվող այլ իրերի վրա, նրա մոտ կամ նրա բնակարանում, ներառյալ տրանսպորտային միջոցում, հայտնաբերվել են քրեական օրենքով նախատեսված արարքի կատարմանը նրա առնչությունը վկայող բացահայտ հետքեր.

4) առկա են հանցանքի կատարմանը անձի առնչությունը հաստատող այլ հիմքեր, և միաժամանակ նա դեպքի վայրից կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձ է կատարել կամ չունի բնակության մշտական վայր, կամ նրա ինքնությունը պարզված չէ:

(…)

8) Սույն հոդվածով սահմանված կարգով իրականացված ձերբակալումը չի կարող տևել 72 ժամից ավելի: Սակայն ձերբակալվածին պետք է մեղադրանք ներկայացվի, և նրա նկատմամբ համապատասխան խափանման միջոց կիրառելու հարցը լուծելու համար մեղադրյալը պետք է դատարան տարվի ոչ ուշ, քան ձերբակալման պահից 60 ժամվա ընթացքում:

9) Եթե ձերբակալվածի նկատմամբ ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի ընտրվում կալանք, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման: Կալանավորման հարցը քննարկելիս դատարանը պետք է ստուգի նաև ձերբակալման իրավաչափությունը:

(…)

Օրենսդիրը տվյալ տեսակի ձերբակալման համար առավելագույն ժամկետ է սահմանել 72 ժամը, միաժամանակ սահմանելով, որ անձը պետք է դատարան բերվի ձերբակալման պահից առավելագույնը 60 ժամվա ընթացքում:

2. Ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու ձերբակալման հիմքը.

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 111-րդ հոդվածի՝

1. Ազատության մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության դեպքում քննիչն իրավասու է որոշում կայացնելու մեղադրյալին ձերբակալելու մասին: Որոշման մեջ նշվում են այն կազմելու տարին, ամիսը, օրը, մեղադրյալի տվյալները, ձերբակալման հիմքը և պատճառները, ինչպես նաև հետաքննության այն մարմինը, որին հանձնարարվում է ձերբակալման իրականացումը:

(…)

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով իրականացված ձերբակալումը չի կարող տևել 24 ժամից ավելի: Նշված հիմքով ձերբակալված մեղադրյալը պետք է դատարան տարվի ոչ ուշ, քան ձերբակալման պահից 12 ժամվա ընթացքում: Հակառակ դեպքում անձը պետք է ազատ արձակվի:

5. Եթե սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով ձերբակալված մեղադրյալը ձերբակալման պահից 24 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման: Կալանավորման հարցը քննարկելիս դատարանը պետք է ստուգի նաև ձերբակալման իրավաչափությունը:

Համաձայն վերոնշյալ իրավադրույթի, օրենսդիրը հստակ սահմանում է, որ ձերբակալման տվյալ տեսակի համար պետք է՝

1) անձը գտնվի ազատության մեջ,

2) անձն ունենա մեղադրյալի կարգավիճակ,

3) անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտություն լինի:

Օրենսգրքի սույն նորմի վերլուծությունից պարզ է դառնում, որ տվյալ տեսակի ձերբակալման համար պետք է առկա լինի վերոնշյալ երեք հիմքերի միաժամանակյա առկայությունը: Տվյալ տեսակի ձերբակալման առավելագույն ժամկետ է սահմանված ձերբակալման պահից 24 ժամը, և եթե անձը դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա անհապաղ ազատ է

արձակվում: Նշված հիմքով ձերբակալված անձը դատարան պետք է տարվի ոչ ուշ, քան ձերբակալման պահից 12 ժամվա ընթացքում:

Այսինքն՝ օրենսդիրը նախաքննությունն իրականացնող մարմնին տվել է հնարավորություն անձի իրավունքները սահմանափակելու և միաժամանակ գտել է, որ տվյալ հիմքով անձի իրավունքները կարող են սահմանափակվել հստակ ժամկետով, փաստելով որ տվյալ ժամանակահատվածում հնարավոր է կատարել բոլոր անհրաժեշտ գործողությունները:

Հաճախ իրավակիրառ պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ, օրինակ, անձը հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալվում է, այնուհետև որոշում է կայացվում ձերբակալված անձին ազատ արձակելու մասին, որից հետո նույն օրը որոպեներ անց կրկին ձերբակալվում է, արդեն ձերբակալման երկրորդ տեսակով (ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու հիմքով):

Այսինքն օրենսդիրը վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն է տվել անձի իրավունքները սահմանափակել առավելագույնը 72 ժամով և նշելով՝ (...) չի կարող տևել 72 ժամից ավել (...) ձևակերպումը, կարելի է փաստել, որ օրենսդիրը գտնում է, որ 72 ժամն այն առավելագույն ժամկետն է, որի ընթացքում հնարավոր է կատարել բոլոր անհրաժեշտ վարութային գործողությունները, իսկ վարույթն իրականացնող մարմինն առաջին տեսակով (հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով) անձին ձերբակալելուց և 72 ժամ հետո ազատ արձակելուց հետո ձերբակալման երկրորդ տեսակով (ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու հիմքով) ձերբակալելու դեպքում անձին փաստացի ազատությունից զրկում է օրենքով սահմանված առավելագույն ժամկետից՝ 72 ժամից ավելի, սահմանափակում է վերջինիս ազատության իրավունքն ընդհուպ մինչև 96 ժամով, որն անընդունելի և ոչ իրավաչափ է:

Այսպիսով՝ օրենսդիրը սահմանել է ձերբակալման երեք տեսակ (երեք հիմք), որոնց հետապնդած նպատակներն իրարից տարբերվում են: Այսպես՝ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալումը նպատակ է հետապնդում արագ բացահայտել կատարված ենթադրյալ հանցագործությունը: Այլ կերպ՝ նշված տեսակը հանցագործությունը տաք հետքերով բացահայտելու նպատակ է հետապնդում, հետևաբար նման հիմքով ձերբակալման տեսակին ամենաերկար ժամանակահատված (72 ժամ) տալը պայմանավորված է հենց այդ հանգամանքով:

Վերոնշյալի համատեքստում ՀՀ Վճռաբեկ դատարանն իր 2024 թվականի հունվարի 18-ի որոշմամբ արձանագրել է, որ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում ձերբակալման ինստիտուտի հիմքում դրված է հանցագործության կանխման և խափանման ***in flangranti***

delicto (անձին ենթադրյալ հանցագործությունը կատարելու պահին (տաք հետքերով) բռնելու) սկզբունքը: Նման իրավիճակները, որպես կանոն, լինում են այն դեպքերում, երբ, օրինակ, ոստիկանությունն իրականացնում է օրենքով նախատեսված գործառույթները (հանցագործությունների և այլ իրավախախտումների դեմ պայքարելու կամ հասարակական կարգի պահպանության պարտականությունները («Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 11-րդ, 19-րդ, 27-րդ և 36-րդ հոդվածներ) կամ համապատասխան հաղորդման հիման վրա մեկնում է ենթադրյալ հանցագործության կատարման վայր (ՀՀ Կառավարության 23 նոյեմբերի 2017 թվականի N 1495-Ն որոշում)) և տեղում «ֆիզիկապես» բախվում է ենթադրյալ հանցանքի և այն կատարող անձի հետ և արձագանքում քրեական օրենքի խախտման փաստին: Դրա համար քննարկվող հիմքով ձերբակալված անձն ազատ արձակվելուց հետո չի կարող կրկին ձերբակալվել նույն կասկածով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 5-րդ մաս), քանի որ ենթադրյալ հանցանքը կատարած լինելու կասկածի հիմքերն արդեն անցյալում են:

Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում ձերբակալումը կիրառվում է այն դեպքում, երբ ենթադրյալ հանցանքի փաստական հանգամանքները (օբյեկտիվ կողմի հատկանիշները) և այն կատարող անձն իրավասու մարմնին հայտնի են դառնում հենց այդ հոդվածում թվարկված իրավիճակներից որևէ մեկի ակնհայտ առկայության դեպքում, այսինքն՝ ակնհայտ անմիջականորեն[1]:

Վճռաբեկ դատարանը 2024 թվականի մարտի 1-ին կայացված որոշմամբ վերահաստատում է Ա. Հովհաննիսյանի գործով արտահայտած իրավական դիրքորոշումը և զարգացնում այն, մասնավորապես՝

(…)

«12. Մեջբերված օրենսդրական կարգավորումների վերլուծության արդյունքում, վերահաստատելով և զարգացնելով Վճռաբեկ դատարանի՝ Ալբերտ Հովհաննիսյանի գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի» առկայության դեպքում ձերբակալման հիմքերը հանդիսանում են այն փաստական իրավիճակները, որոնք հիմնավորում են հենց այդ կասկածանքը և դրա հիմնավոր լինելը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ի տարբերություն կալանավորման, որի կիրառման համար անհրաժեշտ հիմնավոր կասկածի առկայությունը և դրա բավարար լինելը որոշվում է

[1] https://cassationcourt.am/en/news/single/vchrhabek-datarani-hakakorhowpts-ion-palate-nakhadepayin-dirk-oroshowmner-e-dzevavorel-hants-ank-katarats-linelow-anmijakanoren-tsagats-himnavor-kaskatsi-arhkayowt-yan-depk-owm-andzi-dzerbak

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորած իրավական դիրքորոշումներով սահմանված չափանիշներով, ձերբակալման դեպքում ենթադրյալ հանցանքը կատարած լինելու կասկածի հիմնավոր լինելը և դրա ապացուցվածության աստիճանը (ապացուցման շեմը) որոշված է օրենքով: Մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում օրենսդիրը որպես ձերբակալման հիմք սահմանել է հենց հիմնավոր կասկած առաջացնող փաստացի իրավիճակները, որոնցից որևէ մեկի առկայությունն ինքնին բավարար է անձին ձերբակալելու համար: Այս սկզբունքից միակ բացառությունը վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին, որի դեպքում հիմնավոր կասկածից զատ օրենսդիրը սահմանել է նաև, որ պետք է միաժամանակ անձը դեպքի վայրից կամ քրեական վարույթն (ձերբակալումն իրականացնելու իրավասություն ունեցող) իրականացնող մարմնից թաքնվելու փորձ կատարի կամ չունենա բնակության մշտական վայր, կամ նրա ինքնությունը պարզված չլինի: Այսինքն՝ կասկած ծնող իրավիճակները հանդիսանում են նաև անձին ձերբակալելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 4-րդ կետերով նախատեսված հիմքերը և դրանով պայմանավորված կասկածի հիմնավոր լինելը տվյալ դեպքում պետք է գնահատել օրենքով սահմանված իրավիճակներով, այլ ոչ թե հետագայում ձեռք բերված և այն հաստատող այլ ապացույցներով:

Վերոգրյալից հետևում է, որ դատարանը պետք է գնահատի, թե արդյոք տվյալ դեպքում առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված որևէ իրավիճակ, թե ոչ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկած հասկացությունը չի ենթադրում կասկածի հետագա հիմնավորման պահանջ, քանի որ նման դեպքերում կխախտվի անմիջականության չափանիշը: Այսինքն՝ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածը բացառում է կասկածի հետագա հիմնավորման հնարավորությունը, այն միշտ պետք է առկա լինի ի սկզբանե[1]:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է արձանագրել, որ Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած կասկածը պետք է լինի հիմնավոր: Այս հատկանիշի ամրագրման նպատակը ձերբակալման իրավաչափությունը գնահատելիս կալանավորման անհրաժեշտ պայման հանդիսացող «հիմնավոր կասկածի» չափորոշիչի վերաբերելի տարրերի կիրառումն է:

[1] Տե՛ս Արամ Սուքիասյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2024 թվականի մարտի 1-ի թիվ ՀԿԴ/0066/06/23 որոշման 12-րդ կետը:

Այլ կերպ, Դատարանը, խափանման միջոց կիրառելու միջնորդությունը քննարկելիս, պարտավոր է ստուգել ձերբակալման իրավաչափությունը. վերջինս պետք է նախևառաջ ստուգման ենթարկի ձերբակալելիս հանցանք կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայությունը, որի բացառման դեպքում խափանման միջոցի կիրառումը կլինի ոչ իրավաչափ:

Այսինքն՝ անձի կողմից հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմք հանդիսացող փաստական տվյալների ի հայտ գալու և վարույթն իրականացնող մարմնին հայտնի դառնալուց անմիջապես հետո վարույթն իրականացնող մարմինը պետք է անհապաղ միջոցներ ձեռնարկի անձին ձերբակալելու ուղղությամբ:

Միևնույն ժամանակ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքում ընկած բավարար փաստական տվյալների ի հայտ գալու և անձին ձերբակալելու գործողությունների միջև ժամանակագրական խզումը, որպես կանոն, պետք է լինի հնարավորինս կարճ: Հակառակ դեպքում, եթե ժամանակագրական խզումը երկար լինի, ապա այն ուղղակիորեն կհակասի անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով անձին ձերբակալելու քրեադատավարական ինստիտուտի տրամաբանությանը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, իհարկե, հնարավոր են այս ընդհանուր կանոնից բացառություններ, օրինակ՝

1) անձի կողմից հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմք հանդիսացող փաստական տվյալների ի հայտ գալու և վարույթն իրականացնող մարմնին հայտնի դառնալուց անմիջապես հետո վարույթն իրականացնող մարմինն անհապաղ միջոցներ ձեռնարկի անձին հայտնաբերելու և արգելանքի վերցնելու ուղղությամբ, սակայն ձեռնարկված միջոցառումների արդյունքում անձին հնարավոր չլինի հայտնաբերել (օրինակ՝ նրա գտնվելու վայրը հայտնի չլինելու պատճառով),

2) կարող են լինել իրավիճակներ, երբ անձի կողմից հանցանքը կատարելու անմիջականորեն ծագած կասկածն առկա է, սակայն այն հիմնավոր դարձնելու և ամրապնդելու համար վարույթն իրականացնող մարմինը կատարում է լրացուցիչ ապացուցողական և վարութային գործողություններ, օրինակ՝ «հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառում կամ խուզարկություն:

Այսինքն՝ հաշվի առնելով վերոնշյալը՝ կարելի է փաստել, որ կասկածը հիմնավոր կհամարվի նաև ենթադրյալ հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատող որոշակի տեղեկությունների ու փաստերի առկայության դեպքում:

Ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու հիմքով ձերբակալումը նպատակ է հետապնդում դատարան ներկայացնելու ենթադրյալ հանցանք կատարած այն անձին, ով խուսափել է կամ կա իրական

վտանգ, որ ապագայում կարող է խուսափել պատասխանատվությունից: Նման հիմքով ձերբակալման համար անձը պետք է լինի ազատության մեջ, անձն արդեն իսկ ունենա մեղադրյալի դատավարական կարգավիճակ և անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտություն լինի:

Այսինքն՝ վերոնշյալ ձերբակալման հիմքում թվարկված պայմանները հստակ փաստում են այն մասին, որ ձերբակալման նշված տեսակի նպատակը ոչ թե հանցանքի կատարումը տաք հետքերով բացահայտելն է, այլ անձին դատարան ներկայացնելը:

Եվ տվյալ տեսակի ձերբակալման համար առավելագույն ժամանակ է սահմանված 24 ժամը:

Իսկ ինչ վերաբերվում է ձերբակալման երրորդ տեսակին (խափանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալի նկատմամբ), ապա վերջինի նպատակն է ապահովել անձի պատշաճ վարքագիծը:

Հիմնականում վարույթն իրականացնող մարմինն օգտվում է օրենսդրական ձևակերպումից և արհեստականորեն ունենում է հնարավորություն անձի իրավունքներն սահմանափակելու ավելի երկար ժամկետով, քան սահմանված է օրենքով:

Իրավակիրառ պրակտիկայում անձին ձերբակալելուց հետո որոշում է կայացվում քրեական հետապնդում հարուցելու մասին, դրանից հետո անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում է կայացվում, դրանից հետո՝ ձերբակալման ժամկետը լրանալուց րոպեներ առաջ որոշում է կայացվում անձին ազատ արձակելու մասին, դրանից հետո րոպեներ անց անձը ձերբակալվում է արդեն ձերբակալման երկրորդ տեսակով, իսկ որպես սույն գործողությունների հիմնավորում վարույթն իրականացնող մարմինը հիմնականում նշում է տվյալ ձերբակալման տեսակի համար 3 իմպերատիվ պահանջների առկայությունը՝ նշելով, որ

1) անձը գտնվում է ազատության մեջ, քանի որ որոշում է կայացվել անձին ազատ արձակելու մասին,

2) անձն ունի մեղադրյալի կարգավիճակ, քանի որ որոշում է կայացվել անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին,

3) առկա է անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտություն:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունը փաստում է այն մասին, որ հարկադրանքի միջոցի սահմանման առանցքում դրվել են ոչ թե հերթականությամբ իրականացվող որոշակի գործողություններ, որոնցից վերջինը կատարվելու պահից է միայն հնարավոր խոսել ձերբակալման ինստիտուտի մասին, այլ մարդու, նրա իրավունքների և ազատությունների տեսանկյունից առանց դատական սանկցավորման հանցագործության մեջ կասկածվող կամ մեղադրվող անձին

ազատությունից զրկելու առաջին իսկ պահից վերջինս համարվում է ձերբակալված:

Հայաստանի Հանրապետության Քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույցի մեկնաբանման համաձայն՝

«Անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալված անձն ազատ արձակվելուց հետո չի կարող կրկին ձերբակալվել նույն հիմքով, այսինքն՝ միևնույն ենթադրյալ հանցանքը կատարած լինելու կասկածանքով: Սա չի նշանակում, սակայն, որ ազատ արձակվածը հետագայում չի կարող ձերբակալվել՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու նպատակով»[1]:

Վերոնշյալ մեկնաբանման համաձայն՝ անձը ձերբակալման առաջին հիմքով ձերբակալվելուց և ազատ արձակվելուց հետո չի կարող կրկին ձերբակալվել նույն (անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի) հիմքով և միևնույն ենթադրյալ հանցանքը կատարած լինելու կասկածանքով, սակայն որը չի խոչընդոտում անձին ձերբակալումը երկրորդ հիմքով (կալանքը որպես խափանման միջոց ընտրելու նպատակով):

Նման սահմանումը վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն է տալիս օրենքն ընկալելու և մեկնաբանելու, որ էքսպլիցիտ արգելք չկա անձին ազատ արձակելուց հետո անմիջապես այլ հիմքով ձերբակալելու:

Մինչդեռ դրույթի մեկնաբանության մեջ շատ կարևոր է նկատել՝

(…) ազատ արձակվելուց հետո չի կարող կրկին ձերբակալվել նույն հիմքով (…) ***միևնույն ենթադրյալ հանցանքը կատարած լինելու կասկածանքով*** (…) ձևակերպմանը, քանի որ ազատ արձակված անձինք կալանքը որպես խափանման միջոց ընտրելու նպատակով ձերբակալվում են հիմնականում միևնույն ենթադրյալ հանցանքը կատարած լինելու կասկածանքով:

Միաժամանակ հարկ է փաստել, որ անձն ազատ է արձակվում և իրավաբանորեն գտնվում է ազատության մեջ, մինչդեռ փաստացի հնարավորություն չի ունենում ազատ գործելու և տեղաշարժվելու:

Իսկ ինչ վերաբերվում է վերջին իմպերատիվ պայմանին՝ անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտությանը, ապա այս մասով հարկ ենք համարում նշել, որ հիմնականում վարույթն իրականացնող մարմինը որպես նման պայմանի անհրաժեշտություն նշում է՝ փախուստ կատարելու հավանականությունը, վարույթին խոչընդոտելու կամ նոր հանցանք կատարելու ենթադրությունները, մինչդեռ, մեր կարծիքով՝ տվյալ դեպքում ոչ թե պետք է ապագայում կատարվելիք գործողությունների

1 Տե՛ս Հայաստանի Հանրապետության Քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց: 2022 թ. էջ 192:

հավանականությունը դիտարկվի որպես անհրաժեշտություն, այլ՝ օբյեկտիվ իրականության մեջ առկա փաստական տվյալ(ներ)ը:

Միաժամանակ գտնում ենք, որ տվյալ դեպքում ազատ արձակվելուց հետո անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտությունը հիմնավորող հանգամանքները պետք է վարույթն իրականացնող մարմնին հայտնի դարձած լինեն անձին ազատ արձակելուց հետո, այսինքն առկա լինի ժամանակագրական խզում, հակառակ պարագայում կստացվի, որ անհրաժեշտությունն առկա է եղել անձին անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալման ժամանակ, իսկ վարույթն իրականացնող մարմինն անհրաժեշտության առկայության պարագայում որոշում է կայացրել անձին ազատ արձակելու մասին:

Այսինքն՝ վերոնշյալի համատեքստում գտնում ենք, որ պետք է բարձրացվի խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության հիմնավորման շեմը:

Վերոնշյալի համատեքստում գտնում ենք, որ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալված և ազատ արձակված անձին ձերբակալման երկրորդ տեսակով, այն է՝ ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու հիմքով ձերբակալելու համար անհրաժեշտ է՝

1) անձը դրսևորած լինի ակտիվ վարքագիծ, կատարած լինի ակտիվ գործողություններ,

2) անձն այդ ակտիվ գործողությունները կատարած լինի ազատ արձակվելուց հետո:

Այսինքն նման պարագայում գտնում ենք, որ անձն ազատ արձակվելուց հետո կարող է ձերբակալվել կալանքը որպես խափանման միջոց ընտրելու նպատակով ***բացառապես*** այս երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում:

Հակառակ պարագայում կարծում ենք, որ ազատ արձակված անձը չի կարող ազատ արձակվելուց հետո (կարճ ժամանակ անց) ձերբակալվել մեկ այլ ձերբակալման տեսակով, քանի որ դա կարող է հանգեցնել մարդու իրավունքների և ազատությունների խախտման:

Միևնույն ժամանակ գտնում ենք, որ ցանկացած այլ պարագայում անձի ազատ արձակվելուց հետո նրան ձերբակալման այլ տեսակով ձերբակալելու հիմքում չի կարող դրվել միևնույն ենթադրյալ հանցանքը կատարած լինելու հիմնավորումը: Քանի որ վերոնշյալ ձերբակալման երկու տեսակները միմյանցից էականորեն տարբերվում են և նրանց հետապնդած նպատակները տարբեր են:

Միաժամանակ գտնում ենք, որ «(...) Սա չի նշանակում, սակայն, որ ազատ արձակվածը ***հետագայում*** չի կարող ձերբակալվել՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու նպատակով (...)» նախադասության մեջ ***«հետագայում»*** բառը տվյալ համատեքստում իրենից ենթադրում է առնվազն

ժամանակագրական խզում, որն ըստ մեզ չի կարող կարճ լինել (մի քանի րոպե):

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով անձին ձերբակալելուց, այնուհետև ազատ արձակելուց հետո կարճ ժամանակ անց ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու հիմքով ձերբակալելը ոչ իրավաչափ է: Սակայն, նշեմ, որ վերոնշյալ դեպքերը պրակտիկայում հազվադեպ են հանդիպում:

Եզրակացություն

Վերոգրյալ վերլուծությունների լույսի ներքո գտնում ենք, որ նման իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ են օրենքով սահմանված գործիքակազմեր՝ թույլ չտալու վարույթն իրականացնող մարմնին, օգտվելով օրենսդրական ձևակերպումից, սահմանափակել անձի ազատության իրավունքը՝ օրենքով սահմանված առավելագույն ժամկետից ավելի ժամանակով: Հաշվի առնելով նախաքննության առանձնահատկությունները և քննության տվյալ փուլում կողմերի անհավասարությունը՝ գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ի տարբերություն նախկին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (ընդունված 1998 թվականի հուլիսի 1-ին), մարդու իրավունքները և ազատությունները գերադասում է մնացած այլ արժեքներից: Գործող օրենսգիրքն ընդունվել է ավելի մարդասիրական մոտեցումներով, օրինակ՝ սահմանվել և/կամ կրճատվել են որոշակի ժամկետներ, որոնք արագացնում են գործի ընթացքը և հնարավոր է լինում խուսափել մարդու իրավունքների խախտումներից:

Իրավահամեմատական վերլուծության դեպքում գալիս ենք այն համոզման, որ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի նպատակներից մեկը եղել է անձի համար էլ ավելի բարենպաստ պայմաններ ստեղծելը՝ համեմատած ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի:

Կարծում ենք, որ օրենսդրական ձևակերպումը և/կամ դրա մեկնաբանումը չպետք է պատճառ հանդիսանա իրավունքների չարաշահման՝ հաշվի առնելով նաև այն փաստը, որ իրավունքների չարաշահումը կապված է անձի անազատության մեջ գտնվելու հետ, որն էլ իր հերթին արտահայտվում է անձին առավելագույն ժամկետից ավելի երկար անազատության մեջ պահելով. սույն պարագայում ցանկացած իրավունքի չարաշահում անընդունելի է:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք: Ընդունվել է 2021 թվականի հունիսի 30-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին:

3. ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Արամ Սուքիասյանի վերաբերյալ 2024 թվականի մարտի 1-ի թիվ ՀԿԴ/0066/06/23 որոշում:

4. ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի 2024 թվականի հունվարի 18-ի նախադեպային որոշում (https://cassationcourt.am/news/single/vchrhabek-datarani-hakakorhowpts-ion-palate-nakhadepayin-dirk-oroshowmner-e-dzevavorel-hants-ank-katarats-linelow-anmijakanoren-tsagats-himnavor-kaskatsi-arhkayowt-yan-depk-owm-andzi-dzerbak):

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ПОВТОРНОГО ЗАДЕРЖАНИЯ НА ОСНОВАНИИ ДОСТАВЛЕНИЯ В СУД УЖЕ НАХОДЯЩЕГОСЯ НА СВОБОДЕ ОБВИНЯЕМОГО, РАНЕЕ ЗАДЕРЖАННОГО НА ОСНОВАНИИ НЕПОСРЕДСТВЕННО ВОЗНИКШЕГО ОБОСНОВАННОГО ПОДОЗРЕНИЯ, СРАЗУ ПОСЛЕ ОСВОБОЖДЕНИЯ

Аннотация

В статье рассматриваются основные проблемы повторного задержания на основании доставления в суд уже находящегося на свободе обвиняемого, ранее задержанного в ходе предварительного расследования на основании непосредственно возникшего обоснованного подозрения в совершении преступления, сразу или спустя короткое время - несколько минут после освобождения.

Данные исследования были проведены в рамках Уголовно-процессуального кодекса Республики Армения. В данной работе предпринята попытка выделить наиболее часто встречающиеся на практике проблемы вышеуказанного института, выявить законодательные пробелы, неполные регулирования и предложить решения возникающих ситуаций.

В рамках настоящей работы мы попытаемся ответить на вопрос, может ли обвиняемый, задержанный на основании непосредственно возникшего обоснованного подозрения, сразу же после освобождения (спустя несколько минут) вновь быть задержан на основании доставления его в суд.

Ключевые слова: задержание, арест, обоснованное подозрение, обвиняемый, непосредственно возникшее подозрение.

MAIN PROBLEMS OF DETENTION OF AN ACCUSED PERSON, BASED ON A PRESENTATION TO COURT IMMEDIATELY AFTER THE ACCUSED'S DETENTION AND RELEASE, BASED ON AN IMMEDIATELY ARISEN REASONABLE SUSPICION

Annotation

The article examines the issues surrounding the detention of a person during a preliminary investigation based on reasonable suspicion of having committed a crime. It then addresses the situation where, immediately after their release or after a few minutes, the accused - who is already free - is presented to the court.

These studies were conducted within the framework of the Criminal Procedure Code of the Republic of Armenia. In this work, an attempt was made to identify the most frequently encountered problems in the practice of the above-mentioned institution, to identify legislative gaps, incomplete regulations and to propose solutions for emerging situations.

In the framework of this study, we will explore whether a person can be arrested on the grounds of reasonable suspicion and then presented to court shortly after being released.

Keywords: arrest, detention, reasonable suspicion, accused, immediately arisen reasonable suspicion.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 28.01.2025 թ., գրվել է գրախոսության 01.02.2025 թ., ընդունվել է տպագրության 11.02.2025 թ.: